

# ՀԻՆ ՀԱԻԱՍՔ

— ՏՅ ՏՅ ՏՅ —

## ՊԱՇՅՈՎ ԶԱՅԵՐԻ ԱՄԴԻ - ԱՆՇԱՋԻՑ.

(Ցես յ'էջ 8)

Ն Ա Հ Տ Ա Յ անուանն և իմաստին պահպան գոյց է եղիպատկանն նիիր կամ նայր, որ կոչով և յաւելուածով դաւար կամ դաւ-նիր, և համար բուռէր մեծ զիցուհի մի զգօնութեան, արիութեան, բեղմաւորութեան և առատութեան նիւթոց. զարձեալ և զիշերային երկինք՝ մայր Ռայի, այսինքն Որեւու զիցահօր։ Հնդկաց հին քրոց (Վերայիշ) մէջ այլ լուսի Նիշյարէ անուն, որով իմանան զԱկենին հրոյ շաստուածն ի վերայ երկրի (Ծբ. յէջ 195). բայց Անահուայ յարմարագրյն համարին գլունականք՝ անոնց Պհաւանի զիցուհին. որ և արգարեւ ըստ Տրդատայ ըստածին՝ կեցուցիչ նշանակէ: Բայց շատ այլանգակ չափազանցութեամբ՝ զին զնա միանգամանց քյոյր և կին և դուստր Սեւայ, իրենց երրորդութեան մի անձին. և Հայոց պէս իրեն երինչ նուիրէին։ Քննաբանք այլ յառաջ երթալով՝ Անահուայ անոնն Հնդկաց Անահուա բառէն հանձնն, որ նշանակէ եռանգն արեան. այլք յԱնասիդա բառէ, որ մազգեզօնք Անահիտ կ'ըսեն, և իրենց Արտօնիքոր ազրեր յասկութին մի կ'իմանան, իրը հանգարտ, մաքուր և բեղնաւորիչ նշանակութեամբ<sup>2</sup>: Դարձեալ, ոմանք ի պարակերնէ ստուգարանեն զանունն, իրը մանկամարդ բարորակուրծք։ Յիւ-

1. Դիտեիր է այս գրած հայերէն բառին և իմաստին նմանութիւնն եղիպատկանին հետ։ Նշանէն և գիշերային նշանակութեամբ՝ լստին Խօսէ, Փռ. Անտ անուան։

2. Ըստ այսմ՝ հայերէն բառիւ այլ անականակութիւն կըրնար ունենալ։

շնչոց որ Պարսից աղանդոյ մէջ կայ և Ահաւոյ դեւ մի, հակառակ Անահուայ։

Նշանաւոր է նա և Լատինաց Տիանս անունն, որ հակառակ (աջ) կողմէ նայելով՝ Անահոյ կարգացուի։ Հելլենական զիցարանութեան բննիչը՝ կու ստիպութիւնները կեղոնացեալ ճանանալ յԱնահիս (Կիւբելէ, Մայս, Լատոնա, թելլանա, Ափրուղիս)։ Բայց լաւագյն ճանշած է զնա Պղաստոն՝ ի նիիր և յԱթենաս՝ զգօն զիցուհիս։ Ուրիշ շատ կարծիք պյլ եղած են Ոնահուայ անուան և ծագման կամ իսկութեան լիոյ։ ունանք նոյն համարած են ընդ Անամեկիքի, զոր յիշեն Ս. Գիրք Արտամելէքի հետ, իրեւ շաստուած կրակի, արեգակն, լուսնի. ինչպէս Պարսիկ, արեգակն, լուսնի. նոյնը ուրիշ արեւելեաց ունանց հետ՝ Նահիտ անուանեն զԱրուաեակ պայծառ աստղըն, ըստ որում և Յիւնից իրենց (Անահուայ) Արտեմեայ ճակարը զնէրիկ Լուսնի։ հաւանօրէն Հայր այլ այսակիսի պըսակ մի ընծայած են իրենց Տիկնոջ, մանաւանք որ Արտեմեայ լուսնակիր պատկերը ընդունելով ի Յունաց՝ կանգներ էին յԵրեզ։ — Յետ այս ամենայն և այլ եւս կարծեաց՝ հաւանագօյն է սկզբնական միութիւն Անահուայ Հայոց ընդ Նիիթայ եղիպատցուց, Նիշյակեայ Հնդկաց, Դիանայ Լատինաց, Աթենայ Յունաց, (որը պեղծ Անայէկա մ'այլ ունէին) որպէս հետ թերեւա շփոթէ Ստրաբոն զնայն. նոյնպէս և հնութիւնն այս անուամբ շաստուածոյ։ Այլ ուստի կամ ո՞ր ազգէ ծագումն. անյայտ. միայն յայտնի է որ ամեն

աղքէ աւելի Հայր էին անահոտապաշտք, և  
ըստ Քրայցէր հմատ զիցարանի, Հայոց Ա-  
նահոտն է նախատիպ ամենայն Անահոտաց,  
մինչ Փարսից Նահիտն առակ Ազատաց (իշէա)՝  
գասէն էր և ոչ աստուած. և թէպէտ իրենց  
երկրին մէջ այլ կար Անայիդ գաւառ մի,  
բայց ի մերս հոչակեալ էր Անահոտական գա-  
տան որ և Եկեղեցաց. ուրիշ մ՞այլ ի հրե-  
սիսակողմն կուր գետոյ քովերը: Բայց եթէ  
մէկն ուզէ համանուն Անահոտայ հին երկիր  
մի գտնել, պէտք է ընդունի փնտօքն ամե-  
նայն գաւառաց Երկրին և նախաջրնեղեղեանն,  
ուր առաջնածին մարդն (Թշուառ) կային  
և բնակեցաւ յերկրին Նայիդ, յանդիման Ե-  
ղեմայ ու: Տասիանս բազմահմատն այլ և  
մոլորեալն՝ յի գարու, զԱնահիտ համարէր  
մոգ մի ծանօթ Փարսից և Հայոց, ինչպէտ  
զԱպօլոն՝ բժիշկ: Անահոտայ անսոն՝ վերոյի-  
շեալներէն զատ՝ այլեւայլ հեղինակը գրած  
են եւս Անեայ, Անէիդ, Անէիի, Անի ըստ  
ոմանց և Նանէ կամ Նանա, զոր մենք  
տարբեր համարիմք<sup>2</sup>,

ինչպէս պաշտօնն՝ այսպէս այլ պաշտօնատեղիք Անհանտայ՝ առ օտարազգին այլ հոչակիեալ և մեծահանդէս էին. Ինչպէս Եկառատանն Մարաց, երկու կոմմանայք առհմանակիցը Հայոց ի Փոքր Ասիս, Զիլէ ի Փռտոս, և Գերմանիկուպովիս կամ Մարաշ, որոյ դրամոց վրայ այլ երեւի Անհանտայ պատկերն, և այլն: Գալորի առ մերայինս, զամ յԵրիպայն Եկեղեցաց՝ երեւելի մենեան մի եր յլիրմանիր, հին մայրաքաղաք Հայոց, ուր, Վահեւանի քուրմք, Արտաշախի բերած Արտեմեայ պղնձաձայլ ոսկէզօծ անդրին՝ կանգնեցին Ապալոնի անդրոյն հետ, զորս յԵրոյ Երուանդ փոխազրեց ի Բագարան, ուրիշ չառուռածոց հետ, իրեւ Լատինաց Պանթէոն մի ընելոլ այս աւանը, Ախուրեան գետոյ եղեցքում. անմից այլ իր՝ օրինասոր յաջորդն՝ Արտաշէս Բ՝ փոխադրեց Արտա-

շատ , ուր ընկալ Լուսաւորչի և Տրդատայ կուակործան ձեռաց տակ : Բառավ քան զայն , Ս . Առաքելակը Բարդողիմէ՝ փոքրիկ խաշով մի կործաներ էր Անձեւացեաց երկրին Գար- բընաբարի մէջ կանգնուուած Անհատայ կուռքը , և այն խաչը հոն կանգներ : — Երփաց զա- աւոին մէջ յիշափ Անհատայ արռո լեռ մի , ըստ ումանց՝ Հիմայ Քիչօչմէր կոշտածն , ան- շուշա դիցուհույն մեհենի կամ պատակերի մի համար . այն տեղ Դ գարուն վերջինը կու ճանէր Հյափիան , Ս . Դանիէլ ծերպյն աշա- կերտն : Հյամակուան Հայոց անուանի Առա- քեց վանաց մօտ ի Տարօն՝ զեռ ճանցուի Տիրինկատար կամ Ծիրինկատար բերդատե- ղին՝ Տարռո լեռանց մէջ , Արեգակնածած բրազ կոշտած աեղում , ուր կայր Անհատայ պատիկեր մի , զոր և « Խորժակեցաք , զրէր » Ս . Գրիգոր , և առաք զիւերդն Տիրինկա- տարի՝ իւր քաղաքովն և ամենայն սահման- » նօցն՝ ընծայ Ս . Առաքելոցն ու Փախան տիկնոջ՝ տիրին ըստած է այս տեղ , իրեւ Տիրոսի Հայոց : Այսոր նման հին Եսարտա- ցիք այլ (որը ի Հայոց զալթեալ համարուին Տուրյան կոչէին իրենց Աստղիկի դիցուհին :

Բայց , ինչպէս առաջ յիշեցինք , Անհա- տայ և ամենայն Հայ զից հնակազոյն մե- հեան էր յերէզ աւանի Եկեղեցաց զաւափ Գայլ զետոյ քով և մօտ յԵփրատ , Մեծ և Փոքր Հայոց միջոց , որով մերձաւոր և ժանօթ Փոքր Ասիոյ Յունաց : Այս տեղ պաշտաման այլ՝ Արտաշէս բերէր էր յԵլլալայ , և իր ան- կարծական մահուան պատճառաւ ձգուած յԱնի բերդ , ուստի հանեց և կանգնեց որդին Տի- գրիան՝ յաւանս այս , մօտ ի բերդն . և այնչափ հոչակեցան պաշտօնն և հանգէսք աեղույն՝ միշեւ Անհատական գաւառ կոչուիլ , և եր- կիրն այլ անոր և քրմանց ընծայեցաւ : Յի- շեն զայս և օստար պատմիչք՝ զատ ի Մար- տոնէ , (Գիոն , ԼԶ . Ե . Պլին . Ե . Իդ.) , հան- գերձ հարիւրաւոր սպասաւորներով վիցուհոյն , զորս արքանուէր կամ սրբապաշտ կոչէն (Ե- րոսովյի , յերօծօնօլօս) թէ արք և թէ կա- նայր . մեհենին կամ մեհենաց քով ընդար- ձակ անմշակ դաշտ ու մարգ Ցողուած էր՝ նուիրական երլնջոց արածելու համար , որոց ճակատոր ջահաձեւ խարանեալ դրոշմէին , որ-

4. Լատինաց թարգմանութիւնն յստուկ առնուն տեղայ չի դներ. այլ Եղեմայ արեւելքան կողմբ փախաւ, կ'ունէ, եաին:

2. Դիպեթացիք իրենց հաւատաւոր կանայքը  
Անն Կառն.

պէս զի օտարք չմօտենան, և ըստ ժամանակին գոհուին։ Տարին երկու անգամ՝ ի գարնան և յաշնան՝ մեծ տօնահանգեցին կատարուէին։ Իսկ ըստ մեր պատմաց ի 15 վաւասարգ ամսոյ էր մեծ տօնական օրն, նմանութեամբ Սակեան տօնից, որ բարեկենան իմ էր։ Այն օր քրիմակետն թագաւորակերպ հազուած՝ խոյր ի զլուխ կ'առաջնորդէր քրիմաց և բազմամիւ ուխտաւորաց, Այնահայ կուռքը փերցընելով՝ թափօրակերպ մեհենին շուրջը պարաէին, աղօթանան երգերով։ յետոյ աշխարհական հանգէցք, պարք ամենայն առաջը կատարուէին<sup>1</sup>։ զգեստնին այլ փոխելով ի ձեւ Սակաց, անխափի աեարց և ծառայբ։ և երբ կերուխումն այլ յաջորդէր, ի հարի հեթանոսական անկարգութիւնը այլ կ'ըլլային։ մինչեւ ըստ Սարաբոնի՝ ազնուական իրենց զստերաց կուտութիւնն այլ նուիրէին Այնահայ եկամուտ պաշտօնասիրաց, և զայս սրբազն իմ համարելով՝ յետոյ կու հարսնացընէին զանոնք. զգաստութեան Տիկնով՝ այսպէս անզգաստ պաշտօն մի մատուցանելով։ թէ և՝ յետոյ, կ'ըսեն, շատ պարիշտառութեամբ կ'ապրէին այդ նուիրեալքըն։ Գուցէ այս բանիս մէկ կամ մեծ պատճառն էր՝ Այնահայ խնամակալութեան և քեղնաւորութեան պաշտպանն համարուիլն։ Փոքր Ասիս Յունաց արձակաբարոյ ցեղից մօտաւոր, Զիկէի և կոմանայ, Այնահասական զաւառին մէջ այլ մոտած էր համարձակութիւնն, ըստ Սարաբոնի. բայց՝ կամ ոչ միշտ, կամ ոչ ուրիշ կողմեր. Տրգաստայ տուած գաղափարն և Մայր զգաստութեան կոյելն զԱյնահին՝ շատ հեռու է Սարաբոնի սարապութենէն։ թէպէտ և անհնար այլ էր որ շաստուած մի զգաստ և զգաստութեան ազգող րլլար, քրիստոնէական զգացմամբ. որով, Յայսմանորաց հեղինակն այլ պախա-

րաիէ զԱյնահին՝ Արամազգայ կին կոչելով. և թէ Ս. Գրիգոր՝ և խափանեաց զգարշելի « անունն... այլ մի՛ յիշեցին զարպալիքն » և շարաշար գարշութիւնք իւրեանց » :

Հայոց մեծահարկի պաշտօնասիրութեան համեմատ մեծայարզ էր և Այնահայ կոածոյն, ինչպէս կու վկայեն օտար պատմիշը (Պիին, ԼԳ, ԻԴ, Ե. — Ստրաբ. ԺԱ, Դ). և առաջին սոկեղէն անդրի յիշուի սա. որոյ խնացեց այն կողմերու առաջին տիրող Հռովմայեցին, Պոմպէո, թերեւս և ընծանելով այլ պատուեց, ինչպէս որ բրաւ ի Զելա. բայց ազան և անգութն Մարկ. Անտոնիոս կողոպսեց և զորաց թողաց աւարել և աւերել. այլ առաջին ձեռց զարնողն յԱյնահին՝ կորպաց և անզամալոյծ եղաւ, կ'ըսեն Հռովմայեցիք. Բնդ հակառակն, թողոնիացի հարուստ զօրական մի՛ Օգոստոս կայսեր մեծ հարկինք մ՛ընելով՝ կ'ըսէր, թէ ինքն նախ զարկաւ և կոտրեց սոկեղէն անզրիին սրունքը, և անոր կոտրներէն էր այս օրուան պատրաստած կոչունքը. բայց գոցէ այս Զելայի Այնահիտն ըլլայ: Սակայն Հայոց Այնահայ պատոնասէրէն՝ նորէն սոկեղէն կուոց մի շինեցին և կանգնեցին յլիշեզ. օրուն՝ համար Տրգատ կու հրամայէր Գրիգորի, « զի պախակ և թաւ » ոստա ծառոց՝ նուէրու տարցի բագնին Ա. « նահատական պատկերին ։ իսկ Գրիգոր կ'ըսէր. զօր դուզ կոչեն Մեծ Այնահիտ « Տիկին, լեալ իցն որդեոր մարգիկ որ » յայնծամ երբեմն ժամանակի. ցանզի զի « ցապաշա կախարդութեամբ զմարդիկն որ » յայնծամ էին՝ ցնորիւք կերպի կերպս լինեն « բոլ զիացն, հաւանեցուցին զմեհետան շինել և պատկերս կանգնել և երկիր պազա » նել, որ ոչ հսկ են ։, և այլն՝ Այս և այսպիսի բանց շատ օտարուի լուսեցան Տրգատայ՝ այն ատեն, ինչպէս ամենք զիտեն՝ ի պատմութենէ. այլ յետ տասներեք տարւոյ ուրիշ կերպ պազեցին իրեն, որ « զգաստա » ցեալ զօրոքն՝ փշրէին զուիի պատկերն Ա. « նահատականաց դիցն, և ամենեւին զակեղին » քանզեալ վասնէին, և զոսկին և զարժաթն « աւար առեալ », ոչ միայն կոսցն՝ այլ և մեւնին նուիրաց, սեփականեցին եկեղեցւոյ:

<sup>1</sup>. Յոյնք այլ այսպիսի տօնահանդէս մի ունէին՝ կորդակ կոշուած, ի պատիւ իրենց Ելիսեան Այնահայ. նոյն իսկ Արտեմիժն այն կամ ուրիշեղ այլ կորդարս մականուանէր, որ նշանակէր տեսակ մի պարիւս Ելիսացոց և Դորացոց։ Մեր լեզուավ կորդակ զլիսանց պազաւարտ նըշանակէ, զուցէ օտար լեզուէ առնուած։

զայս դրուատելով՝ Անանիս վ. « Օրինեալ » եւ որո ըստանկար առաջաւառ, կ'ըսէ, որ » շքեղամոխ նազանօք զօրացար ի վերսյ պատ- ս կերացն զոտելոց, և հարեալ խորտակեցեր » զսնոտի պաճաճան զիւանուէր և քաջապերն ո պանծանոց Անահիսն տիկինջ՝ » :

ինչպէս ի վերն յշեցինք Փոքր Հայոց ոսհմանակից Փոնտոսի՝ Զիէլ և կոմանա քա- ղաքաց մէջ այլ՝ կային մեծածովով ուխտա- տեղիք և մեհեանի Անահիսայ (Սարաբ. ծթ., գ., 36-7). ըստ Պրոկոպիոսի՝ Ովրեստէս շինց նախ կոմանայի մեհեանը, յետոյ փո- խաղբեց յշերէք. բայց Հայք բազմէթեամբ կու զային և ի կոմանա, այլ և ի Զիէլ, որ յաղթուեցան և ջարգուեցան Սակը, և յաղթողքն հողարձը մի ձեւացըներով՝ վրան կանգնեցին մեհեան և քաֆին Անահիսայ, Օմանայ և Անադատայ, և Սակեան տօները հաստատելով՝ մեծ հանդիսի կատարէին բնա- կէց տեղույն. Պոմպէս այլ ընդարձակեց գտեղին և քաղաքացւց զԶիէլ, որ և յետոյ քրմաց սրբազն և ազատ քաղաք մի համա- րեցաւ, քրմապետն այլ իրեւ թագաւոր։ Ասկէ վար չէր մար և կոմանա (Կիմենէ) մտ յԵրոկիս (Թօքազ), այլ զեղոսւթեամբ այլ աւելի, մինչեւ կորնթոսի Աստղկան նը- մանցընէին զայն։ Նյոյսպէս և միս կոմանա կապաղովիսից՝ Զահանայ կոզմերում, որոյ չաստածն Մա կամ Ենիոս կոչուէր, և 6000 պաշտօնեաց ունէր՝ ընդ այր և ընդ կին, քրմապետին իշխանութեան տակ, որ ընդարձակ երկիրներ ունէր մեհենին շորջա- կայ, և թագաւորին երկրորդ կամ փոխանորդ համարուէր, քորմէն այլ՝ իրը արքայազանք։ Այս տեղոյ Անահիսն էր Տաւրիական Կո- չուածն, որ Եփիքնի հաստատողն՝ իր սպոյ

մազերը նուիրեց. անոր համար կունանա ը- ստեցաւ, որ յունարէն նշանակէ զիսակ, զիսայ մազեր (հօմիօն, յորմէ և կունիուա, փարսաւոր, Comète գիտաւոր)։ Զատնը ա- չօք տեսաւ Ամասիացի մեծ աշխարհազիրն Սարարոն, և ստորազրէ հաւատարմաթեամբ. բայց մեհենից հիմնարկողն ո՞վ կըրնայ հա- ստատէ՛ թէ կէս առասպելեալ Ագամեմոնի գուտորն ըլլայ։ Նոր տօնեներո հին կրօնից վրայօց զրողն Մորի (Գ., 183) իբր անտա- րակոյց համարի որ Հայք մնուցին Անահիսայ պաշտօնը, ոչ միայն ի կապաղովիսիա՝ այլ և ի Արդիա

Այսքան իրենց բնիկ սահմաններէն հեռու զԱնահիս փայլեցընող Հայք՝ անկարելի է որ իրենց կեղրոնին մէջ այլ նոյնակէ և գրւց աւելի շփայլեցընէին. և ինձ շատ հա- ւանական երեւէր որ Աշողասայ երկրորդ մեհեանն Ռակէմօր Ռակէժին դից, որոյ ե- բազինն Ռակէնատ, ըլլայ Անահիսայ. թէ և հին վարդապետ մի (Սիմեոն)՝ կարծէ Դեմետրի և Գիւսանեայ. կուռցն և բազինն թէ սոկեղէն նոյլ չէին, զոնէ սոկէպատ էին. Ազաթան- գելի յայն բնազիրն՝ շրսօռնէս ըսելով՝ կ'իմացընէ որ Ռակէհասն՝ ոսկեղէն հատիկ. ներ են, զորո թուի թէ ինքն դիցուհին թա- փէր. կամ որպէս երբեմն ի հարսնաթեան Մաթինկան՝ « աեղ ոսկի աեղայր ո, (Խոր. Բ. Ծ.)։ Այս Հայոց Ռակէմօր նման՝ Բուլ- զարը այլ իրենց ըստաւորց ծնողը՝ Ռակէմայր անտանէին (Չլթնա-մայիքա)։ Այս բազինը և վրայինն այլ կործանեց Ա. Լասաւորին ի գտնալն ի կեսարից, և հօն կանգնեց առաջին եկեղեցին, տօնի օր սահմաննելով Անամի ամսոյ եօթներորդն (հոկտեմբեր 15)։ Անահիսայ Մեհենից աեղեր, կուռցն և նիւթին բաւական յայտնի են, իսկ իր մեւն և նշանքն ոչ նոյնակէ. այլ որովհետեւ Յու- նաց Արտեմիսեայ պատշաճի՝ այնոր այլ նման կարծուի. հիմկու հնագէտք՝ արեւելեան զլա- նաձեւ քարանց կամ ականց վրայ աեսնելով դիցուհի մի՝ երկու կապարճ ուսաց վրայ, ուոր և մական ի ձեռին, համարեցան Անահիս. վասն զի և Եփիպատացւց Նիկիթն աղեղնաւոր և նետաւոր կերպարանուած է, յայսնի է Յու- նաց աղեղնաւոր կամ որսորդ Արտեմիսն, որ

1. Պրոկոպիոսի (ի Պատմ. Պարս. պատերզմ. Ա. ձէ) Տաւրիական Արտեմեայ պատկեր համարի՝ Երիշաց Անահիսը, և իրը կանգնեալ յիշիքե- նեայ և Ովրեստեայ՝ որդւոյ և դասեր Ազամեմ- նոնի. ուրիշ զրոց մէջ (Գոթաց պատրզմ. Դ., Ե), Ռակի կոմանա կրոշէին, կըսէ, երկու մեհեան- քըն, մին Արտեմեայ, միւսն իշիքենեայ, և ա- ռանց փոփոխութեան շինուածյն՝ փոխուեցան յեկեղեցին։

րոյ համար և Եղջերուահար կոչուէր. իսկ Պարսից քանդակներուն վրայ կ'երեւի գունա և մահիկ ի զլուխն, ի ձեռքն այլ ծաղիկ. պարսկապես զիրք այլ ստորագրեն զԱնահիտ լանջագեղ, ոսկեպանոյն, ոսկեզէն վերարկուա, քայլամանեկաւ, գոտով, ոսկեթիթեղն բոլորաձեւ զիսանոցաւ. իսկ պատմանան՝ ՅՈ քառածին չըրշանց մորթովէ ձեւացած. Այս եարի աւանդութեան պատճառ՝ կ'ըսեն, որ ջրունն կամ կուղք՝ չորս ձազ բերէ կամ չորս ամիս յզենայ (Չառուրքժիթանադամ). և դարձեալ, Նահիտ՝ ջրոց զիցուի կամ ոզի էր. կուղքն այլ ի ջորս բնակի, և ջրասոյզ զիւաց թշնամի է. Ոմանք այլ այս կենդանացն մորթոյ փայլունութեան համար՝ Անահտայ վայելուզ զգեստ յարմարած համարին, — Անահտայ ուրիշ աշխար-

հաց մէջ մեծ պաշտօնն այլ յիշել՝ աւելորդ է մեզ. բայց շեմք կը ընար զանց ընել Ս. Գրոց նշանաւոր յիշատակն՝ ի վկայութիւն Եփեսոսի աշխարհանոյակ տաճարին, որոյ մանր մեհեաններ շինող տրծաթագործ մի, վախնալով որ Պօղոս Առաքելոյ քարոզութեամբ՝ իր արուեստն խափանի, գործեց ժողովորդն անոր գէմ, և թոլոր քաղաքն յատք ելաւ. հազիւ կը ըցաւ քաղաքակետաց մէկն հանդարտեցրնել զանոնք, ըսելով. « Ո՞վ է ի մարդկանէ՝ որ ոչ զիսէ զիփենացոց քաղաքն՝ » մեհենազարդ՝ մեծին Այսուեայ դիցն », և զոր, արծաթազործն այլ կ'ըսէր, թէ ամենայն Ասիս և ատիզերք պաշտենու. Այս ձաշներս կը ընար արձագանդ ըլլալ Հայոց Անահտայ չերմեռանդն պաշտամանց :

(Շարայարելի)

## ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

Մարտին հայագիտին կարծիքն մարկոսին առեւտարանին ԺԶ – գլխոյն վերջին  
տուներուն նկատմամբ :

**Փ**աղղացի հայագիտաց վերայ խօսած ժամանակ մնոցանք յիշատակել մէջերնէն նոռագոյն մ' այլ զՄարտին Պավէէն (P. P. Martino) քահանայ, Պարիսու ուղղափառ կանառին ուսուցչին՝ որ քանի մը տարի յառաջ վախճանեցաւ. Մեր դրուածքին տառնձին ու ընդունակուած մերձաւոր նոր տպագրութեան պահովով զարմանել այս զանցառութիւնը, գնենք բանասէր ընթերցողաց առջեւ իր կարծիքը՝ մարկոսին աւետարանին վերջին զիսցոյն ենթագրեալ կամ կարծուած յաւելուածին վրայ՝ նկատմամբ հայիսկան թարգմանութեան, որոյ խօսքն արդէն ըրած ենք յամսաթերթիս անցեալ տարւոց ապրիլին:

Հեղինակն այս ինդրավ կը զբաղի իր Introduction à la critique textuelle du

Nouveau Testament, յ'էջ 280 երկրորդ (վիմագրեալ) հաստորոյն, մասնաւոր զլուխ մի բանից նուիրելով հայ եկեղեցւոյ այն մատենագրաց՝ որ ընդունած են այդ վերջի տողից վաւերականութիւնը: Մէջ բերենք իր խօսքերը.

« Հայոց մատենագրական պատմութեան սկզբնաւորութիւն՝ Քրիստոսի 420 թաւականէն կը ակսի. և առաջին յիշատակարանքն՝ բաց ի թարգմանութենէ Սուրբ Գրոց, եկեղեցական մատենանքն են, Ժամազիք, Եարական, Եիշատան, Ճաշոց, և այլն Ժարակաց շկայ՝ որ հայ լեզուն ունէր արդէն երկար ժամանակէ ի մեր իւր գոյսմիւնը. բայց որովհետեւ զրութիւնք յցն կամ ասորի տառիք կ'ըլլային, ուստի և այն ամենայն զրուածք որ